**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.pashtpan.am


31.05.2018թ.

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի**
**Քարտուղարության ղեկավար**
**պարոն Տիգրան Մարտիրոսյանին**
**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի օգնական**
**Ջուլիետա Բաղդասարյանից**

## ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

**Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,**

Տեղեկացնում եմ, որ 2018 թվականի մայիսի 28-ից 29-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը Ստրասբուրգում (Ֆրանսիայի Հանրապետություն) մի շարք հանդիպումներ է ունեցել Եվրոպայի խորհրդի բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի, ԵԽ Ժողովրդավարության գլխավոր տնօրինության ղեկավար Սնեժանա Սամարջիչ-Մարկովիչի, ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության ղեկավար Քրիստոս Ջիակումոպուլոսի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Գուիդո Ռայմոնդիի և այլ անձանց հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանում տեղի ունեցած վերջին իրադարձությունների՝ հավաքների և ցույցերի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաև այդ ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության իրականացրած աշխատանքները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պաշտոնական այցի նպատակով ձեռք է բերել 154.500 (հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրանքի կոնյակներ՝ համապատասխան ներկայացուցիչներին հանձնելու նպատակով:

**Պաշտպանի օգնական՝** **Զուլիետա Բաղդասարյան**

**30 մայիսի 2018 թվական**